ՅԱՆՈՒՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ

Գարոնայք դաշնակցականներ, մենք անվախօրէն մեր տեսակէտը պարզեցինք հանրութեան առաջ, ապա տուինք ձեր գերադասած ու-դիալ, ալսինքն կուսակցականօրէն արտայայտուող, մի՛ շարք ուրիշ Հայ կուսակցութիւնների տեսակէտները:

Տպեցինք նաև ձեր սպառնացող նամակներից. սակայն ստանում ենք ամեն օր ուրիշներ, անգամ նկարներ, այն ատրճանակի նկարը որով պիտի աւելացնէք ձեր ոճիրների ցանկը, մութի կամ ստուերի մէջ, յետևից կամ որևէ անկիւնակ վայրում հարւածելով մեր խմբագրին, ստա-ցանք նաև այն ներագրեալ մահացողի նկարը՝ որի վիճակում պիտի գտնուի մեր խմբագիրը, յետոյ ինչոր նամակներ Սևում խցւանդի ծալքերում թաքնւած ինչոր ողորմելի Հ. Տարզեան և այլք:

Մի քանի գիշեր էլ ձեր դժբախտ մարդ-գործիքը սողաց կէս-գիշերից անց մեր խմբագրի բնակարանի պատի տակ, երեք գիշեր սրանից առաջ բռնւեց ոստիկանից: Պարսկերէն մի քանի բառ կակազեց, ապա արտասահմանեան թուրքերէնով, ոստիկանի պահանջին թէ՝ «Դու այս ժամին, ի՞նչ գործ ունես այսպէս երկար այս պատի տակ» Ասում էր՝ «Զբօսնում եմ, բու մանըմ եօլդաշըմ էվի դըր...» և այլն: Ափսոս որ յաջողեց փախչել ոստիկանի ձեռքից: Այսպէս թէ այնպէս, դուք ձեր կուսակցութեան ճակատագիրն էք դրոշմում այդ ուղղութեամբ:

Իսկ մենք, այդ բոլորի փոխարէն հանրութեան ենք յանձնում «ՅԱՆՈՒՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ» «ԱԼԻՔ»-ի յօդւածը և Տրեզ-նօյի «ՆՈՐ-ՕՐ»-ի ճշմարտութեան ու իրականութեան մերկացումը: Թող կարդան ձեր սիրելի համակիրները և եթէ դոյզն տրամաբանութիւնն ու հայութիւնն ունեն դարձեալ «պաշտպան կանգնեն ձեզ ու ձեր ուղղութեան»:

Թող գիտնան, որ Հայը այլևս ոչ մի կուսակցութեան պէտք չունի, որը յաւակնութիւնն ունենայ վարելու իր ճակատագիրը, Հայ պետութեան առջև պիտի մայր մտնեն այդ բոլորը, պիտի սփիւռքի համայն Հայութիւնը մի սիրտ և մի հոգի դարձած նպաստէ Մայր Հայրենիքին բարոյական և նիւթական միջոցներով:

„ՎԵՐԱԾՆՈՒՆԴ“

VERATSNUND | August 24, 1945